Արձանագրություն N 3

ԿՇՄՊ-ԷԱՃԱՊՁԲ-26/07 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգով ապրանքների ձեռքբերման հրավերի գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստի

ք. Երևան 12 հունվարի 2026թ.

Մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Արթուր Սարգսյանը, անդամներ՝ Աշոտ Բաղդասայանը, Ավագ Սարգսյանը և քարտուղար՝ Նվարդ Ավագյանը

Օրակարգ

1. ԿՇՄՊ-ԷԱՃԱՊՁԲ-26/07 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի պարզաբանման հարցման մասին

1.1 ԿՇՄՊ-ԷԱՃԱՊՁԲ-26/07 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Արթուր Սարգսյանը նիստը հայտարարեց բացված և տեղեկացրեց, որ 2026 թվականի հունվարի 9-ին e-auction համակարգի միջոցով ստացվել են հրավերի պարզաբանման վերաբերյալ հարցումներ, մասնավորապես՝

ՀԱՐՑՈՒՄ 2. Հարգելի հանձնաժողով տեխնիկական բնութագիրը փոխելով ոչ բոլոր հարցերին եք պատասխանել: Ամեն դեպքում JAC T9 մոդելը հանելով և Toyota մակնիշը ավելացնելով միևնույնն է ձեր կողմից նկարագրված տեխնիկական բնութագրին համապատասխանում է նշված մոդելներից միայն մեկը՝ NISSAN NAVARA-ն, այսինքն մրցույթին կարող է մասնակցել միայն NISSAN NAVARA-ի մատակարարը: Հետևաբար սույն ընթացակարգով խախտվում են գնման առարկայի բնութագրերի օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջները: Բացի այդ փոփոխության արձանագրությունում բացակայում է հետևյալ նախադասությունը, որը սակայն ներառված է Հրավերի Պայմանագրի հավելվածի տեխնիկական բնութագրում՝ Մատակարարի կողմից պետք է ներկայացվեն մատակարարվող ապրանքների շահագործման (այդ թվում՝ մեքենայի շարժիչի և հիդրավլիկ համակարգի համար օգտագործվող յուղերի տեսակը և բնութագիրը՝ ձմեռային և ամառային ժամանակահատվածների համար) ինչպես նաև պահպանման պայմանները:

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ 2. Հարգելի գործընկեր, կատարելով ընդլայնված ուսումնասիրություն կհամոզվեք, որ ոչ միայն NISSAN NAVARA-ն է համապատասխանում հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին, նշված մյուս արտադրողները նույնպես ունեն մոդելներ, որոնք ունեն նշված չափորոշիչները: Ինչ վերաբերվում է հարցման վերջին նախադասությանը նշենք, որ փոփոխման արձանագրության մեջ միայն նշվել են այն բառերը (նախադասություն, պարբերություն), որոնք ենթարկվել են փոփոխման, իսկ մյուս չափորոշիչները մնացել են անփոփոխ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի

նախագահ _____ Արթուր Սարգսյան

անդամներ _____ Աշոտ Բաղդասարյան

_____ Ավագ Սարգսյան

քարտուղար _____ Նվարդ Ավագյան